

Կը ներկայացնեմ այս տեղ իր կարեւոր աշխատասիրութիւնները ի նպաստ հայագիտութեան, զանց ընելով յիշատակել մանր առթական յօդուածաշարքերը:

1. Հայք ի Զմիռնիս եւ ի ջրճահայս. Ա. եւ Բ. հատոր. Վիեննա 1899, 8^o, էջք ԺԲ + 369 + Ժ + 161:

2. Տեւիզիի, Նագիլիի եւ Այոռնի Հայոց դպրոցները. Հանդ. Ամս. 1897, էջ 274—275:

3. Ռոչագ եւ Ռոչագի Հայերը. Հանդ. Ամս. 1898, էջ 206—208:

4. Մակիսա. Հանդ. Ամս. 1899, էջ 97—103:

5. Ակնարկ մը (Այոռնի) հետաքննական բեկորներու. Հանդ. Ամս. 1906, էջ 277—279:

6. Այցելութիւն մը ի Գոռ-Առաւ. Հանդ. Ամս. 1908, էջ 44—47:

7. Բարձր Հայք. հատոր Ա. Կարին քաղաքը. Վիեննա 1925, 8^o մեծ, էջք ԺԲ + 496:

Բարձր Հայք. հատոր Բ. Կարնոյ գիւղերը. Վիեննա 1926, էջք Ը + 184:

8. Արժըթի եւ Ս. Լուսաւորչի վանքը. Հանդ. Ամս. 1899, էջ 338—340:

9. Ախալցխա. Հանդ. Ամս. 1902, էջ 79—85:

10. Գերեզմանատուն կաթողիկէ Հայոց Կ. Պոլսոյ: Ակնարկ մը նախկին եւ արդի Գերեզմանատան վրայ: Շիրիմներու, դամբարաններու յիշատակագրութիւնը: Վիեննա 1931, 8^o, էջ 273:

11. Յուդայի հայերէն ձեռագրաց Սանասարեան Վարժարանի ի Կարին. Հանդ. Ամս. 1912, էջ 55—61. 1921, էջ 173—181, 486—493, 580—584 (Թ. 44—94):

12. Յուդայի հայերէն ձեռագրաց Արժնեան Վարժարանի ի Կարին (անտիպ):

13. Յուդայի հայերէն ձեռագրաց Կարնոյ գիւղերու (անտիպ):

14. Աքսորի ձամբան (Ա.) Վիեննա 1922, 8^o, էջ 119:

15. Աքսորի ձամբան (Բ.) Անհաստատայիք — իրականք (անտիպ):

16. Աքսորի ձամբան (Գ.) Սեւ քախտ (անտիպ):

17. Աքսորի ձամբան (Դ.) Տարագրութիւն, Ազատութիւն (անտիպ):

18. Վերադարձ Կարնէն Կ. Պոլիս. 1915, նոյեմբեր — յունուար. տպաւորութիւններ (անտիպ):

Իր աշխատասիրութեամբ լոյս տեսած է գրաքար՝

19. Իննօրեայ պատրաստութիւնը տօնից Ս. Կոռնի եւ Սրտին Յիտուսի, հանդերձ յանդերձանովք աղօթից. Վիեննա 1901, էջ 187:

Աշխատութիւններս անմահ յիշատակ պիտի մնան անոնց հեղինակին անուան հայագիտութեան ծոցը:

Հանգիստ յաւիտենական իր հոգւոյն:

Հ. Ն. Ա.

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ՎԱՆՔԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԸ

1837—1937

Այս տարի երկրորդ յոբելեան մ'ալ տօնեց Մխիթարեան Յարկս, ինքնին Մայր Վանքի շինութեան հարիւրամեակը:

Մխիթարեան Հայրերը 1810ին Տրիեստէն փախստական պանդուխտի ցուպն ի ձեռին ապաստանած էին Կայսերական քաղաքս Վիեննայիցիներու ոսկեղէն սրտին վրայ վստահացած: Չխաբուեցան անոնք իրենց վստահութեան մէջ: Հակառակ օրինական մեծ դժուարութիւններու կ'ընդունէին կարճ ժամանակի մէջ հրաման ու չնչին դումարով նաեւ տեղ՝ Կնդդաւորներու հին վանքին մէջ բնակութիւն հաստատելու: Այս բարեացակամ ընդունելութեամբ հալածական Հայրերու սրտին մէջ Նախախնամութեան հաւատքը երկնացող սնունդ մը կ'ընդունէր: Նոր կեանքի մը փարուժով կը ձեռնարկէին գործի: 1835 տարւոյն հրդեհը, որ կիսախարխուլ վանքը ծանր կը վտանգէր, առիթ կ'ըլլար իրենց հիմէն կանգնելու Մայր Վանքի շէնքը ապագայ դարերու համար — Հայ Ժողովուրդը ու անոր հետ ու անոր համար վանքը յաւիտեան ապրելու սահմանուած են: Այդ դարակազմիկ վայրկեանը Վանքի պատմութեան մէջ պէտք էր մեծագոյն հանդիսութեամբ տօնուէր: Ու 18 Հոկտ. 1837ին նորին վեհափառութիւնը Ֆերդինանդ Ա. կայսրը, ի ներկայութեան Մարիա Աննա կայսրուհւոյն, կայսերական եւ պալատական մեծանուն իշխաններու եւ իշխանուհիներու, խուռն բազմութեան մը առջեւ կը դնէր աւարտաքարը Մխիթարեան Մայր Վանքի շէնքին: Կայսերական աչքերուն առջեւ այդ արարողութիւնը բարեացակամ վերաբերմունքի նշան մըն էր արեւելքի քահանաներու հանդէպ, որոնք եկած էին Աւստրիոյ երկնքի տակ ապաստանարան մը փնտռելու. թերեւս նա կ'ընդունարէր այն մշակութային ու դաստիարակական հսկայ դերը, զոր կայսերական կրկնակ արժեւներու թելերուն տակ, նոր յարկին մէջ անած հայրերը պիտի կատարէին հայ ազգին մէջ, փառքէն առանց անմասն թողլու նաեւ իրենց երկրորդ հայրենիքը՝ Աւստրիան: Ու կանգնեցան ամբողջ հիմքերու վրայ հաստափոր պատեր, կարծես ամբողջ աշխարհ մը կրելիք ըլլային. այո, կրեցին անոնք Հայ Ազգի տառապանքի աշխարհը ու դեռ կը մնան կանգուն:

Այս շինուածքին հարիւրամեան է, զոր կը տօնէ Մխիթարեան հաստատութիւնս իւր հարիւրամեայ տաճարի մէջ: Մինչդեռ նախորդ յորեւեանը Ուսումնաթերթիս էապէս ուսումնական ու մշակութային բնոյթ ունէր, հիմնարկութեանս հարիւրամիայի հանդէսին ծրագիրը մեծ չափով եկեղեցական ու ընկերային էր, որուն սահմանուած էր ամբողջ շաբաթ մը՝ 20—28 նոյեմբեր:

Երեկոյեան հանդիսական ժամերգութեամբ բացուեցաւ տօնակատարութիւնը. հայեր եւ օտարներ փութացեր էին ներկայ գլխունուէրու: Նոյ. 21 Կիրակին պիտի կատարուէր գլխաւոր արարողութիւնը՝ գոհութեան Զայնաւոր Պատարագ մը վանքի եկեղեցւոյն մէջ: Հանդիսական պատարագիս ներկայ էին Մեծութիւնը Աւստրիոյ Հանրապետութեան՝ Նախագահ Վ. Միկլաս, Վիեննայի մեծաշուք քաղաքապետը՝ Ռիխարտ Շմից, Աւստրիոյ Միւրանաւորին կողմէ, որ մեկնած էր Հռոմ, ձեռնադրիչ Եպ. Փր. Կամպրաթ, կրթական, առեւտրական, արտաքին գործոց նախարարութիւններէն, Համալսարանէն, թաղականութենէն, աստիկանութենէն ու բանակէն կարեւոր դէմքեր, կրօնաւորական հաստատութիւններու նահանգապետները, աւստրիացի մեծ հասարակութիւն մը եւ հայ գաղութը: Հանդիսադիրն էր Գերպ. Հ. Մեսրոպ Վ. Հապոզեան, Ընդհր. Արքայ Մխիթարեանց ի Վիեննա: Մխիթարեան երգչախումբը նոր երգիչ ուժերով զօրացած, ընկերակցութեամբ գործիական օրքէստրի եւ ղեկավարութեամբ Հ. Մ. Սրապեանի երգեց անմահն Այտընեանի պատարագը: Բամբ գործիքներու որոտով թնդացին կամարները, ելեկտրականացաւ օդը, լեցուեցան հոգիները, եւ ազատ, խաղաղ ժողովուրդի մը վեհափառ ներկայացուցիչները երկու ժամ ըմբռնեցին հայ հոգւոյն տառապանքի ու պաղատանքի ալեկոծումները, որ խունկերու բոյրին հետ կ'ողողէին տաճարը: Հանրապետութեան վեհաշուք Նախագահը, գերազնիւ Քաղաքապետը, Գերապատիւ Եպիսկոպոսը եւ ուրիշներ ուշադրութեամբ հետեւած էին հայերէն պատարագին՝ գերմ. թարգմանութիւնը ձեռքերնին:

Զայնաւոր Պատարագէն ետք մեծափառ հիւրերու տրուեցաւ հանդիսական ճաշ մը վանքիս սրահին մէջ, որ խառն ոգեւորութեամբ ու մտերմիկ ընտանութեամբ անցաւ: Գերպ. Հ. Մեսրոպ Վ. Հապոզեան, Ընդհր. Արքայ, վանքիս կողմէ շնորհակալութիւն յայտնեց Աւստրիոյ քաղաքական ու եկեղեցական գլուխներուն, որոնք դար մը ու աւելի բարեացակամութեան մեծագոյն ցոյցերով երախտագէտ թողուցած էին Միաբանութիւնս: Պատասխանեց Զեռնադր. Եպ. Փր. Կամպրաթ ու խրախուսեց շարունակել աննկուն եռանդով նախնիներու ճամբան եւ գործել ի պատիւ Ազգին ու Կրօնքին: Կարգացուեցաւ այս առթիւ ձօնուած աւստրիացի բանաստեղծուհւոյ մը ուղերձը, զոր ստորեւ կը ներկայացնենք:

FESTGEDICHT

ANLÄSSLICH DER
HUNDERTJAHRFEIER DER GRUNDSTEINLEGUNG
DES
MUTTERHAUSES DER MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN

Wo fern im Tor des Osten sagenhaft
Armeniens Gebirge wuchtig ragen,
Hat Gregor der Erleuchter einst voll Kraft
Das Kreuz der Christenheit durchs Land
getragen.
Von Haß umbrandet trug durch manche
Schlacht
Ein stolzes Volk das Kreuz mit hartem Wollen.
Durch Glanz und Elend schwankte seine Macht
Auf heißumkämpften, blutgedüngten Schollen.
Von Übermacht zermürbt, voll Leid und Gram,
Aus dem geliebten Heimatland vertrieben,
Ist dieses harte Volk, wohin es kam,
Dem Glauben und dem Volkstum treu geblieben.
Als Tröster kam der junge Mechithar,
Er rief zur Tat versprengtem Volk zum Segen,
Und freudig schuf die fromme Brüderschar
Ein frommes stolzes Werk auf harten Wegen.
In junge Seelen fiel des Glaubens Strahl
Als milder Trost und feierliches Mahnen
Und ernst erklang beim hohen Abendmahl
Das Gotteswort im holden Klang der Ahnen.
Durch ernste Forschung ward der Ahnen
Glanz
Aus der Vergessenheit emporgetragen,
Aus alten Schriften stieg ein Sagenkranz
Von eines Volkes fernen Urzeittagen.

Stets weiter schritt auf sagenhafter Spur
Der Forschergeist und barg vor dem Vergessen,
Was jene Welt an Wissen und Kultur
Im wechselvollen Sturm der Zeit besessen.
Verklärt vom Glanz der adeligen Macht,
Bedrückt, verfolgt von mancherlei Gefahren,
Erstand zu Wien ein Werk der alten Pracht
Durch Gottes Gunst vor mehr als hundert Jahren.
Hier steht der alte Bau, von Lärm umtost,
Doch Frieden bergen die geweihten Wände;
Die schwache Seele ringt um Heil und Trost
Und gottgefällig regen sich die Hände.
Wo wir in diesen Räumen ernst und schlicht
Für Seelenheil und Gottes Ehre sorgen,
Wo hehre Kunst von hohen Zielen spricht,
Ist wohl das Erbe Mechithars geborgen.
Aus diesen Mauern dringt des Glaubens
Wort
Zu allen, die bedrückt um Liebe flehen,
Und herrlich spricht des Wissens reicher
Hort
Von Menschenwerk und irdischem Vergehen.
Aus tiefem Glauben sprießen durch die Zeit
Des Herzens und des Geistes edle Triebe;
Gott segne dieses Werk in Ewigkeit,
Ein Werk des Friedens und der Menschenliebe!

Gallus.

ՈՒՂԵՐԶ

Գեղածիծաղ Դանուբի հոգեպարար ասիերուն,
Դիւթիչ շունչովն անտառի շունիներուն երերուն՝
Տանար մը վեհ բագմած է ժայռի մը սեպ կատարին,
Ու կը տօնէ իւր կեանքի հարիւրամեան այս տարին:

Հայաստանի ցոլաթուրմ արօտներէն խոտառատ՝
Հարիւր տարի շարունակ երինջներ գիրգ, անարատ,
Եղջիւրներով մահկաճել, կուշտերն լեցուն, սոնփացած՝
Երկնաւորին գոհուելու այն տանարը են գացած:

Ու նոխազներ նորածին, կաթի բոյրը ունեցերուն,
Վրիժակներով ծաղկեպսակ, կեանքեր կայտառ, բոց, եռուն,
Ազատակամ կը մատչին սրբբանուէր կըրակին,
Գաղափարի երկնաւոր ողջակէզներ քանկագին:

Բոյրովն անոնց ոսկրներուն՝ կ'օծուին պատերն տանարին,
Կը հարբենայ օդն համակ, ամպերն ոսկի կը վառին:
Գալարումով մըշտատանջ՝ անուշ խունկի դիւթական՝
Կը բարձրանայ հոտն անոնց երկնաւորին յանդիման:

Հարիւր տարի գոհուեցան, պիտի գոհուին դեռ դարեր,
Մինչեւ դադրին հայրենի տանարներու մուխն, աւեր.
Մինչեւ կանգնին ամբակուռ կամարները հայկական,
Եւ հայ մանուկն զիլ ձայնով կըրկին երգէ շարական:

Մարմարանա՛ն հիմներդ քար՝ հարիւրամեայ տանարիդ.
Պատերդ ամուր, երդիքդ սեպ՝ ոսկի դառնան ու յակինք:
Ու գուարակներ բիրաւոր նուիրումով անսահման՝
Աստուածավառ խորանիդ դարեր անվերջ մերձեցան:


Հայր պատուական, եւ Քեզ իսկ, որ կը վարես այս տանար,
Յօդէ երկինք օրհնութիւն, իմաստութիւն եւ հաննար:
Մատերդ օծուն հոգւոյն մէջ Որդիներուդ թող կաթեն՝
Մեծ հաւատքիդ, վեհ յոյսիդ, ու բոց սիրոյդ սուրբ կաթէն:

Հ. Պ. Է.

Յաջորդ Երեքշաբթի Ընթրիքի հրահրուած էին հայ Գաղու-
թին կարեւորագոյն դէմքերը: Հայաշունչ շրջանակին մէջ ոգեւոր
բաժակաճառեր փոխանակուեցան օրուան մեծութեան մասին,
հաստատութեանս ապագայի մաղթանքներով: Սօսեցան Գերպ.
Հ. Մեսրոպ Վ. Հապոզեան, Ընդհր. Աբբայ, եւ Գերպ. Հ. Սահակ
Վ. Կողեան, Առաքելական Կառավարիչ Կաթ. Հայոց Ռումանիոյ,
եւ գաղութիս կողմէ՝ տեղւոյս հոգեւոր հովիւը Տէր Եղիշէ խաչա-
կիր Բահանայ Իւթիւճեան: Հ. Պօղոս Էսապալեան արտասանեց
յորբեղինական Ուղերձը:


Ամբողջ շաբաթը անցաւ եկեղեցական արարողութիւններով,
որոնք փակուեցան ըստ պատշաճի լատիներէն հանդիսական ձայ-
նաւոր պատարագով. հանդիսադիրն էր Աւստրիոյ կայսերական
տան արքունի եպիսկոպոս Է. Սայրէլ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԵԹԱՐԵԱՆՑ ՀԻՆ ՎԱՆՔԸ 1828ԻՆ

Մեծագույն յարմարություններով



ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Թի 11, 12

ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՅԱ. ՏԱՐԻ 1937

ՆԿԱՐԱԳԻՐ ԿԱՐԳԱՅ Ի ԲԱՆԻՑ ԵԶՆԿԱՆ ԵՐԻՑՈՒ

1. Այս խորագրի տակ հասած է մեզի գրուածք մը Պարիսի Ազգային Մատենադարանի Թ. 112 հայերէն ձեռագրին մէջ, թղ. 291ա—292ա¹: Ձեռագիրս, որ կը բովանդակէ թղ. 1—104 Յաճախապատում եւ թղ. 108—290 Ազգաթանգեղոս, գրուած է «Ի թուականին Հայոց ԶԳ. (1254), Ի քաղաքիս որ կոչի ՌիՄ, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս, որ (յօր. որոյ) յանուն սուրբ աւետարանչացն Յովհաննու եւ Մատթէոսի. եւ է սա հոգեւուն Հայոց»:

Ձեռագրին վերջին թղթերը, ուր կը գտնուի «Նկարագիր կարգաց», նորոգութիւն տեսած է. նորոգելը տեղ տեղ թուղթեր փակցուցած է, որով ծածկուած են զրեր եւ բառեր. այս ծածկուած զրերու ընթերցուածը յետոյ նորոգչէն արտադրուած են փակցուած թուղթերու վրայ:

Այս օրինակէն ծագած են՝ Վենետիկի Միթարեան Մատենադարանի Հաւաքածոյ Ա., էջ 35 = Թ. 294, 20ա—բ, յամէ 1824 Ա., (Հմմտ. Հ. Բ. Սարգիսեան, Յուցակ, Բ., էջ 1059—1060). եւ Յաճախապատում Գ. եւ Ազգաթանգեղոս 2., էջ 347 (Հմմտ. Հ. Բ. Սարգիսեան, Ազգաթանգեղոս եւ իւր բաղձատարեան գաղտնիքը, էջ 315): Ունիմ աչքի առաջ օրինակութիւն մը, զոր հանած է Հ. Յ. Գաթըրճեան Պարիսի օրինակէն:

Պարիսի օրինակէն արտադրած եւ հրատարակած է զայն Արշակ Տէր-Միքէլեան, Սամուէլ Անեցոյ Ժամանակագրութեան Ծանօթութիւններու մէջ, Վաղարշապատ 1893, էջ 266—268:

2. Այս տեղ կը հրատարակեմ գրուածքս միւսանգամ, հիմ առնելով Հ. Յ. Գաթըրճեանի օրինակութիւնը Պարիսի ձեռագրէն:

¹ F. Macler, Catalogue des Manuscrits arméniens de la Bibliothèque Nationale, Paris 1908, p. 55.

Ա.

ՆԿԱՐԱԳԻՐ ԿԱՐԳԱՅ

Ի ԲԱՆԻՑ ԵԶՆԿԱՆ ԵՐԻՑՈՒ

Թի ՈՒՍՏԻ՞ ԷՆՆ ԿԱՄ ՈՐՊԵՍ ԶԻԱՐԳ ԶԱՋՈՐԳՈՒԹԻՒՆԲ ԹԱԳԱՌՈՐԱՅՆ՝ Ի ՏՐԳԱՏԱՅ ԵՒ ՔԱԼԱՆԱՅԱՊԵՏԻՑՆ՝ Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԷ, ՈՐ ԿԱՅԻՆ ՄԻՆՁԵԻ ԱՌ ՄԵՁ. ՎԱՐՈՒՄՆ ՓՈՔՐԻ ՇԱՅԷ ԴՐՈՇՄԵԱԼ ՎԱՍՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ Ի ՎԵՐԱՅ ՀԱՍԱՆԵԼՈՅ

Յեա Տրդատայ թագաւորեաց որդի նորա¹, որ կոչեցաւ Փոքր Խոսրով: Ի սորա աւուրս եկաց քահանայապետ երէց որդին Գրիգորի Վրթանէս:

Յեա նորա Տիրան, որդին Խոսրովու: Ի սորա աւուրս Յուսիկ որդի Վրթանիսի եկաց քահանայապետ:

Յեա նորին թագաւոր յաւուրս Տիրանայ: Յեա մահուան Յուսիանն կալաւ քահանայապետութիւնն Հայոց Փառնեքոսն ոմն մի յազարակէն Մատրանն Յովհաննու, Ի Տարան գաւառէ Ի Մեհենաղեղջն², որ մայր է եկեղեցեացն Հայոց, այսինքն նախ անդ եկեղեցի զառաջին շինեալ:

Յեա նորա թագաւորէ Արշակ որդին Տիրանայ: Ի սորա աւուրս Ներսէս որդի Աթաւանայի եկաց յաթոնն Յուսիանն՝ թոռ(ի)ն Գրիգորի մեծի, զորմէ ասեն համեմատեալ Գրիգորի Ի գործս կարգաց վարուց զնացից իւրոց: Ձկնի սորա Մահակ. սա եկաց կաթողիոս: Եւ ապա Շահակ եւ Չաւրէն եւ Ասպուրակ կացին կաթողիկոսք, որ էին Ի գաւակէ Ազրիանոսի եպիսկոպոսի:

Յեա նորա Պապ որդին Արշակայ:

Յեա նորա Վարազդատ Ի նմին թագաւորութեանն տոհմէ: Եւ³ ապա օտարակալութիւն:

Ապա Խոսրով ոմն Ի նմին տոհմէ թագաւորացի:

Խորագիր. Ի [բանից] շիք: Ի [Տրդատայ] շիք:
¹ Զ. որդին իւր:
² Զ. Ի մեհենաղեւաղջն:
³ Զ. որ: